ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 13.03.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2020/42

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 27.02.2020թ. թիվ 26/26-1/2830-2020 գրությամբ «Գալիմա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Վահրամ Բաբայանի անվան թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 21.02.2020թ. գրության հիման վրա, 27.02.2019թ. թիվ 26/26-1/2830-2020 գրությամբ նախաձեռնել է «Գալիմա» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Գալիմա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Գալիմա» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրել է հետևյալ դիրքորշումը.

Համաձայնագիրը մեկ անգամ ուղարկվել է էլեկտրոնային եղանակով, բայց Ընկերությունն այն չի ստացել, այնուհետև գրություն են ուղարկել այն ներկայացնելու վերաբերյալ, որին ի պատասխան Ընկերությունը հայտնել է, որ չի ստացել համաձայնագիրը, դա տեղի է ունեցել հունվարի 15-ին: Նույն օրը ապրանքի հետ միասին ուղարկվել է: Ընկերությունը մատակարարել է կոմպոտ «Սիս նատուրալ» ՍՊԸ-ի կողմից արտադրված՝ բալի և սերկևիլի համով, այդ տեսականին պայմանագրի տեխնիկական բնութագրում գրված է, բայց ապրանքը չի ընդունվել, հետ է վերադարձվել այն պատճառաբանությամբ, որ Պատվիրատուն ելակ է պատվիրել: Հեռախոսազանգից հետո, երբ Ընկերության տնօրենը տեղեկացրել է, որ Պատվիրատուն նման բան իրավունք չունի պահանջել, հաջորդ օրը հայտնել է, որ տեխնիկական բնութագրին չի համապատասխանում: Պատվիրատուի պնդմամբ հատապտղի զանգվածային մասը պետք է լինի 18-20%, բայց Ընկերությունը հատապտղային կոմպոտ չի մատակարարել: Սպիտակուցները, ճարպերը, ածխաջրերը համապատասխանել են, իսկ էներգետիկ արժեքը, որ նշել են 81-97 կկալ, անգամ իրենց կողմից նշված տեսակները չեն կարող դա ապահովել, ինչ վերաբերում է անվտանգությունն ու մակնշումը ՀՀ կառավարության 2009թ հունիսի 26-ի Ն 744-Ն որոշմանը համապատասխանեցնելու պահանջին, Պատվիրատուն տեղեկացվել է, որ այդ որոշումը վաղուց փոփոխվել է, իսկ Ընկերությունն ինչպես նաև բոլորը, պարտավոր են առաջնորդվել նոր որոշումներով: Այդ որոշման հին լինելու մասին հայտնել են ՀՀ-ի համապատասխան կառույցից՝ Ստանդարտների ազգային ինստիտուտից: Նշել է նաև, որ այդ կոմպոտը «Սիս նատուրալ» ԱՊԸ-ն արտահանում է մոտ 15 երկիր և ՀՀ-ում համարվում է ամենաթանկ կոմպոտներից: Հետաքրքիրն այն է, որ այդ ապրանքը ՀՀ-ում ու մյուս երկրներում համապատասխանում է նորմերին, իսկ այս դպրոցին՝ոչ: Այսքանից հետո պայմանավորվածություն են ձեռք բերել այն մասին, որ իրենց հայտը պետք է ուղարկեն էլեկտրոնային եղանակով masis2scholls.am հասցեից, որում չպետք է նշեն ելակ բառը, հետո Պավիրատուն պատվեր չի ուղարկել:

Ինչ վերաբերում է հեռախոսազանգերին՝ Ընկերությունը պնդել է, որ որևէ զանգ չեն ստացել դպրոցի կողմից: Հստակ երևում է, որ Պատվիրատուն միտումնավոր է արել այս ամենը, որ այլ կազմակերպություն ապրանքը մատակարարի: Ընկերությունը կոմպոտ շատ այլ դպրոցների է մատակարարում Արարատի մարզում, որոնք շատ գոհ են:

Ինչ վերաբերվում է հնդկաձավարին, ապա Ընկերությունը նշել է, որ ապրանքը եղել է սննդի համար նախատեսված տոպրակով, այդպես ստացել է գործարանից՝ «Անուշ լինի» ՍՊԸ-ից, այսինքն՝ գործարանային է, իսկ Պատվիրատուի կողմից արված հայտարարությունն այն մասին, որ ՍԱՏՄ-ն արգելել է, արժանահավատ չէ, քանի որ Երևանի բոլոր մանկապարտեզներում այդպես է մատակարարվում, իսկ ՍԱՏՄ-ն թույլատրում է:

«Գալիմա» ՍՊԸ-ի տնօրենը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/25 ընթացակարգի շրջանակներում 03.03.2020թ. ժամը 11:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր մասնակցությունը, ով պնդել է վերոնշված դիրքորոշումը:

3. <u>«Վահրամ Բաբայանի անվան թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Վահրամ Բաբայանի անվան թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 21.02.2020թ. գրությամբ հայտնել է, որ որ հիմք ընդունելով «Վահրամ Բաբայանի անվան թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի և «Գալիմա» ՍՊԸ-ի միջև 18.12.2019թ. կնքված թիվ «ՄՀՀԴ-ԳՀԱՊՁԲ-20/01-81» գնման պայմանագրի 2.1.7.1 կետի ա), բ) ենթակետերի և 8.12 կետի պահանջները՝ «Վահրամ Բաբայանի անվան թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը 2020թ. փետրվարի 14-ին միակողմանի լուծել է թիվ «ՄՀՀԴ-ԳՀԱՊՁԲ-20/01-81» գնման պայմանագիրը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/42 ընթացակարգի շրջանակներում 03.03.2020թ. ժամը 11:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ՆԳ-2020/42 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ՆԳ-2020/42 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Վահրամ Բաբայանի անվան թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի և «Գալիմա» ՍՊԸ-ի միջև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա (ֆինանսական միջոցներ չնախատեսված լինելու պայմանով) 18.12.2019թ. կնքվել է «ՄՀՀԴ-ԳՀԱՊՁԲ-20/01-81» ծածկագրով ապրանքի մատակարարման գնման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր):

2. Պատվիրատուն **18.11.2019թ.** տեղեկագրում (www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայք) հրապարակել է առանց գնման ընդհանուր գումարի նշման գնումների պլանը, իսկ ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո գնման պլանում համապատասխան լրացում կատարելուց հետո հրապարակել **01.02.2020թ**:

3. Պատվիրատուն **14.02.2020թ**. տեղեկագրում հրապարակել է «ՄՀՀԴ-ԳՀԱՊՁԲ-20/01-81» ծածկագրով պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 27.02.2020թ. թիվ 26/26-1/2830-2020 գրությունը, «Վահրամ Բաբայանի անվան թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի 21.02.2020թ գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ **գնումների պլանը, ներառյալ՝ փոփոխությունները**, հաստատվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն **հրապարակում է տեղեկագրում**, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների պլանի:

Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը սույն օրենքով սահմանված կարգով կարող է կնքվել պայմանագիր՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում: Սույն մասի համաձայն կնքված պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվել:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 4-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը հետևյալ գործընթացների (գործառույթների) ամբողջությունն է՝

1) <u>գնումների պլանավորում</u>.

2) **<u>գնման գործընթացի կազմակերպում</u>** (ներառյալ գնման առարկայի բնութագրերի հաստատումը).

3) **<u>պայմանագրի կնքում.</u>**

4) պայմանագրի կատարում և կառավարում:

Կարգի 16-րդ կետի համաձայն՝ ***<u>գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում:</u>*** **Գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ <u>փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն</u>** է, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է: ***<u>Եթե տվյալ տարվա ընթացքում գնումների սկզբնական պլանում չներառված, լրացուցիչ գնումը կատարելու համար նախատեսվում են ֆինանսական միջոցներ, ապա գնումների պլանում կատարվում է լրացում:</u>***

<u>Կարգի 17-րդ կետի համաձայն՝ Գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է:</u>

Կարգի 18-րդ կետով սահմանվում է՝ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն գնում կատարվելու դեպքում գնումների պլանում գնման առարկան ներառվում է առանց գնման ընդհանուր գումարի նշման՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո գնման պլանում համապատասխան լրացում կատարելու պայմանով: ***<u>Ընդ որում, համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն սահմանված կարգով</u>***

<u>փոփոխություն է կատարում գնումների պլանում, իսկ պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման նպատակով համաձայնագիր կնքելու ծանուցումը և կնքվելիք համաձայնագրի նախագիծը պայմանագիրը կնքած անձին է ուղարկում գնումների պլանում փոփոխությունը կատարվելու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում:</u>

Կարգի 33-րդ կետի 12-րդ ենթակետով սահմանվում է, որ եթե պայմանագիրը կնքվել է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, սակայն տվյալ տարում նախատեսված չեն կամ նախատեսված են ավելի քիչ ֆինանսական միջոցներ, քան պայմանագրի գինն է, ապա ***պայմանագրում նախատեսվում է, որ հետագայում ապրանքների մատակարարումը, աշխատանքների կատարումը կամ ծառայությունների մատուցումն իրականացվում են <u>համաձայնագիր կնքելու միջոցով:</u>*** Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա պատվիրատուի կողմից համաձայնագիր կնքվում է, եթե պայմանագիր կնքած անձի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով սույն կարգի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: ***<u>Ընդ որում, պայմանագրի կողմը համաձայնագիրը կնքում, իսկ ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու մասին ծանուցումն ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:</u>***

Պայմանագրի 8.12 կետի համաձայն՝ պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: ***<u>Ընդ որում, վաճառողը համաձայնագիրը կնքում և նոր ապահովումները Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:</u>***

Պայմանագրի թիվ 1 հավելված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ «Գալիմա» ՍՊԸ-ն պարտավորվել է **համաձայնագիր կնքելուց** հետո՝ 2020 թվականի հունվարից-մայիս, իրականացնել մատակարարում 20-րդ օրացույցային օրը, Պատվիրատուի պատվիրած քանակով:

Պատվիրատուի կողմից «Գալիմա» ՍՊԸ-ին 07.01.2020թ., 10.01.2020թ. և 15.01.2020թ. էլ. փոստով ուղարկվել են ծանուցումներ ապրանքի մատակարարման վերաբերյալ՝ կից ներկայացնելով ստորագրման ենթակա համաձայնագիրը, իսկ 16.01.2020թ և 04.02.2020թ էլ. փոստով ուղարկվել են միայն ծանուցումներ ապրանքի մատակարարման վերաբերյալ, միաժամանակ նշելով, որ համաձայնագիրը դեռևս չի ստորագրվել Ընկերության կողմից:

13.01.2020թ. «Վահրամ Բաբայանի անվան թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի կողմից կազմվել է եզրակացություն այն մասին, որ ***Ընկերությունը չի կնքել պայմանագիրը ուժի մեջ մտնելու համաձայնագիր,*** վճարման ժամանակացույց և չի մատակարարել գնման ժամանակացույց-տեխնիկական բնութագիր Հավելված 1-ով նախատեսված հնդկաձավար և կոմպոտ չափաբաժիններով սահմանված ապրանքները:

Պատվիրատուն հիմք ընդունելով **Պայմանագրի 2.1.7.1 ա) և բ), 8.12 կետերը**՝ միակողմանի լուծել է Պայմանագիրը և պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ ծանուցումը **14.02.2020թ.** հրապարակել է տեղեկագրում:

Ի պատասխան Պատվիրատուին ուղղված Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 12.03.2020թ. թիվ ԲՔԱ-ԳՆ/2/3791-2020 գրության՝ ներկայացվել է «Վահրամ Բաբայանի անվան թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպված թիվ «ՄՀԴ-ԳՀԱՊՁԲ-20/01-81» ծածկագրով ընթացակարգի շրջանակում ձեռք բերվող ապրանքների մասով հաստատված և տեղեկագրում հրապարակված գնումների պլանը:

Տրամադրված տեղեկատվության ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ Պատվիրատուի կողմից www.procurement.am տեղեկագրում առանց գնման ընդհանուր գումարի նշման գնումների պլանը հրապարակվել **18.11.2019թ**., իսկ ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո գնման պլանում համապատասխան լրացում կատարելուց հետո՝ **01.02.2020թ**, ընդ որում 18.11.2019թ հրապարակված գնումների պլանը կազմված է ՀՀ պետական գնումների օրենսդրության պահանջների խախտմամբ,

մասնավորապես՝ գնումների պլանում սահմանված չեն Պայմանագրով ձեռք բերվող ապրանքների քանակը:

Այսպիսով՝ վերը շարադրված իրավական նորմերի վերլուծությունից հետևում է, որ Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն գնում կատարվելու դեպքում պատվիրատուն պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման նպատակով համաձայնագիր կնքելու ծանուցումը և կնքվելիք համաձայնագրի նախագիծը պայմանագիրը կնքած անձին է ուղարկում գնումների պլանում փոփոխությունը կատարվելու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում, իսկ պայմանագրի կողմը համաձայնագիրը կնքում պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումն ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում, մինչդեռ՝ գործում առկա նյութերի ուսումնասիրության արդյունքում արձանագրում եմ, որ «Վահրամ Բաբայանի անվան թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից ֆինանսական միջոցներ նախատեսվելու հիմքով գնումների պլանի փոփոխությունը 01.02.2020թ հրապարակված լինելու պարագայում Պայմանագիրը լուծվել է 14.02.2020թ., այսինքն՝ Կարգով սահմանված տասնհինգ աշխատանքային օր ժամկետ չպահպանելով:

Միևնույն ժամանակ հարկ եմ համարում նշել, որ համաձայն Պայմանագրի Հավելված 1-ի՝ ապրանքների մատակարարումը պետք է իրականացվեն պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո, այն է՝ կողմերի միջև համաձայնագիր կնքվելուց հետո, իսկ մինչ այդ Պատվիրատուի կողմից Ընկերությանը մատակարարում իրականացնելու պահանջ չէր կարող ներկայացվել, ուստի գտնում եմ, որ Ընկերության կողմից որպես պայմանագրից բխող մատակարարի պարտականությունների խախտում հնարավոր չէ արձանագրել:

Այսպիսով՝ ամփոփելով վերոնշվածը՝ գտնում եմ, որ նման պայմաններում հնարավոր չէ արձանագրել «Գալիմա» ՍՊԸ-ի կողմից Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտման փաստը, հետևաբար գտնում եմ, որ Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 27.02.2020թ. թիվ 26/26-1/2830-2020 գրությամբ «Գալիմա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**